ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

Երևան-0010, Հանրապետության հր. Կառավարական տուն 3

“ 30 ” .....օգոստոսի.. 2022թ. N..ԱԵ//22762-2022.....

«Գլավդորստրոյ» ԲԸ-ի տնօրեն
Ս. Պետրոսյանին
ՌԴ, ք. Մոսկվա, Վերնայա փողոց, շենք 1, բն. 4
ՀՎՀՀ 7729511888
glavdorstroy.ao@inbox.ru

Հարգելի՛ պարոն Պետրոսյան

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Գլավդորստրոյ» ԲԸ-ի (այսուհետ՝ Կապալառու) միջև 07.07.2022թ.-ին «Գնումների մասին» ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն կնքվել է «ՏԿԵՆ-ՀԲՄԱՇՁԲ-2022/2Շ» ծածկագրով կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի շրջանակում Կապալառուի կողմից ներկայացվել է Պայմանագրի և որակավորման ապահովումներ՝ տուժանքի ձևով։

Ֆինանսական միջոցներ նախատեսվելուց հետո, Պայմանագրի 8.13 կետի համաձայն՝ օրենսդրությամբ սահմանված կարգով, «Գլավդորստրոյ» ԲԸ-ին ներկայացվել է համաձայնագիր կնքելու առաջարկ։ Համաձայնագիրը սահմանված ժամկետում հաստատվել է Կապալառուի կողմից և ներկայացվել է Պատվիրատուին։

Ընթացակարգի հրավերի (այսուհետ՝ Հրավեր) 10-րդ կետի համաձայն՝ Ընտրված մասնակցի հետ պայմանագիրը կնքվում է, եթե որակավորման և պայմանագրի ապահովումները ներկայացնելու պահանջի հիման վրա, այն ստանալու օրվանից հաշված

10 աշխատանքային օրվա ընթացքում, ընտրված մասնակիցը ներկայացնում է որակավորման և պայմանագրի ապահովումները։

Հրավերի 10.2 կետի համաձայն որակավորման ապահովման չափը հավասար է ընտրված մասնակցի գնային առաջարկի 30 տոկոսին։ Որակավորման ապահովումը ներկայացվում է կանխիկ փողի կամ բանկերի կամ ապահովագրական կազմակերպությունների կողմից տրամադրված երաշխիքների ձևով։ Ընդ որում ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև պայմանագրի կատարման արդյունքը Պատվիրատուի կողմից ամբողջական ընդունվելու օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ, իսկ 10.3 կետի համաձայն՝ պայմանագրի ապահովման չափը կազմում է կնքվելիք պայմանագրի գնի 10 տոկոսը։ Պայմանագրի ապահովումը ներկայացվում է բանկային երախիքի կամ կանխիկ փողի ձևով։ Պայմանագրի ապահովումը պետք է վավեր լինի առնվազն մինչև կնքվելիք պայմանագրով սահմանվող պարտավորությունների ամբողջական կատարման վերջին օրվան հաջորդող 90-րդ աշխատանքային օրը ներառյալ։

Կապալառուի կողմից նարկայացված պայմանագրի ապահովման երաշխիքը չի համապատասխանում օրենսդրությամբ սահմանված պայմաններին՝ երաշխիք տված կազմակերպությունը չի հանդիսանում ոչ բանկ, ոչ էլ ապահովագրական կազմակերպություն, իսկ որակավորման ապահովման երաշխիքի փոխարեն ներկայացվել է կանխավճարի ապահովման երաշխիք։

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Պատվիրատուի կողմից չի ընդունվել նշված երաշխիքները և Պայմանագիրը համարվել է միակողմանի լուծված։

Հայտնում ենք, որ «Գլավդորստրոյ» ԲԸ-ի նկատմամբ կկիրառվեն ՀՀ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջները՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով։

Ընկերության տվյալներն օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին։

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ Ընկերության կողմից տուժանքի ձևով ներկայացված պայմանագրի և որակավորման ապահովումները սահմանված կարգով կներկայացվի ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրով

սահմանված գումարները ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված 900005000758 և 900008000664 գանձապետական հաշվեհամարներին փոխանցելու նպատակով:

8/30/2022

X

ԱՐԹՈՒՐ ԵՐԻՑՅԱՆ

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: YERITSYAN ARTUR 1609770064

Ա. ԵՐԻՑՅԱՆ

Կատարող՝ Մ. Փարսադանյան
Գնումների համակարգման և կազմատնտեսական վարչություն
Հեռ.(010) 511-328
Էլ. փոստ՝ m.parsadanyan@mta.gov.am